Հաստատում եմ՝ Մ.Մաշտոցի անվ.
համալսարանի ռեկտոր.
իրավաբանական գիտությունների թեկնածու
Հ. Զ. Սարգսյան
«10» 11 2024թ.

Առաջատար կազմակերպության կարծիքը

Նորիկ Էդիկի Շահնազարյանի

«ՀՀ Սահմանադրության արդի հայեցակարգային մոտեցումները, իրավաբանական հատկանիշները և զարգացման միտումները» թեմայով ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ.

Նորիկի Էդիկի Շահնազարյանի ներկայացրած թեկնածուական ատենախոսությունը նվիրված է սահմանադրության էության, իրավաբանական հատկանիշների և հետագա զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Հենց սկզբից նշենք, որ հեղինակը լիարժեքորեն է օգտագործել սկզբնաղբյուրները, սահմանադրական ակտերը և մասնագիտական գրականությունը, ինչի արդյունքում թեկնածուական աշխատանքը ներկայանում է տեսականորեն հիմնավորված, ավարտուն և տրամաբանական կառուցվածքով հետազոտություն: Հեղինակն իրավացիորեն պնդում է, որ ՀՀ Սահմանադրությունը՝ բարձրագույն իրավաբանական ուժով օժտված մեկ միասնական ամբողջական նորմատիվ իրավական ակտ է, որը հայ ժողովրդի (ազգի) կամքին համապատասխան կարգավորում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ծավալվող ամենից էական, արմատական, վճռորոշ հարաբերությունները, այն պաշտոնապես հռչակում և իրավաբանորեն ամրագրում է մարդուն և ժողովրդին պատկանող բնական և անօտարելի իրավունքները և ազատությունները, ինչպես նաև հիմնադրում է դրանց իրացման (կենսագործման) իրավական կառուցակարգերը:

Սահմանադրությունը որպես հասարակության համակեցության կանոնակարգման հիմնարար նորմատիվ իրավական փաստաթուղթ, երաշխիքն է երկրի կայուն և դինամիկ զարգացումն ապահովելու համար: (Ատենախոսություն, էջ 6):

Հետազոտության տեսական նշանակությունն արտահայտվում է նրանում, որ հեղինակը նոր հայեցակարգային դիրքերից է բնութագրում ՀՀ Սահմանադրության էությունն ու էական հատկանիշները, որոնք որոշակիորեն զարգացնում են տեսական պատկերացումներն ընդհանրապես սահմանադրության վերաբերյալ և դրանք կարող են հիմք հանդիսանալ հետագա մշակումների համար:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատանքում ձևակերպված դրույթները, հետևությունները և առաջարկությունները, կարող են օգտագործվել սահմանադրական փոփոխությունների և ուսումնառության գործընթացներում:

Ընդհանուր առմամբ, դրական գնահատելով կատարված աշխատանքը, ունենք որոշակի նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

Առաջին, դժվար է համաձայնվել հեղինակի այն մտքի հետ, ըստ որի սահմանադրությունը քաղաքական և գաղափարական փաստաթուղթ է: Մեր կարծիքով, սահմադարությունն, ամենից առաջ, նորմատիվ իրավական ակտ է, որն իր բովանդակության մեջ ուղղակի կամ անուղղակի կարող է պարունակել նաև որոշ քաղաքական և գաղափարական տարրեր և ոչ ավելին:

Երկրորդ, աշխատանքի երրորդ գլխում խոսելով սահմանադրական բարեփոխումների հիմնական ուղությունների մասին, մեր կարծիքով, հեղինակը պետք է հստակ ուղենշեր իր տեսլականը սահմանադրական փոփոխությունների կամ նոր սահմանադրության խնդրահարույց հարցերի և դրանց վերջնարդյունքի վերաբերյալ, ինչը իրականում շատ բարդ խնդիրներից է ներկայումս հայ իրականության մեջ:

Արված նկատառումները կրում են մասնակի բնույթ և չեն կարող ազդել նրա դրական արդյունքների վրա:

Աշխատանքը շարադրված է գրագետ՝ իրավաբանական տեսանկյունից և գիտականորեն հիմնավորված:

Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական բովանդակությունը:

Հեղինակի տպագրված գիտական աշխատանքներում լիարժեքորեն են արտացոլված աշխատանքի հիմնական դրույթները:

Աշխատանքի բովանդակությունը համապատասխանում է ընտրած մասնագիտության թվանիշին:

Աշխատանքը քննարկվել է Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի գիտական խորհրդի 2024 թվական հոկտեմբերի 18-ի նիստում, որում ներկա էին՝ իրավաբանական գիտությունների թեկնածու Հ.Զ. Սարգսյանը, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Հ. Սաֆարյանը, բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Թևանյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու Լ. Միրզախանյանը:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում ենք, որ Նորիկ Էդիկի Շահնազարյանի «ՀՀ Սահմանադրության արդի հայեցակարգային մոտեցումները, իրավաբանական հատկանիշները և զարգացման միտումները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ավարտուն և ամբողջական հետազոտություն է, լիովին համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի» պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցող՝ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի ուսումնական գծով պրոռեկտոր,
բանասիրական գիտությունների թեկնածու Մ. ԹԵՎԱՆՅԱՆ